

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ – 2

ԳԱԳԻԿ Գ. ՄԱՐԳՍՅԱՆ, ՀՈՒՄԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Տարիների դաշտային-հավաքչական հետազոտությունների ժամանակ, ի թիվս հարյուրավոր վիմական վկայագրերի, հանդիպել են բազմաթիվ արձանագրություններ, որոնք առանձնանում են ոչ միայն իրենց պատմաաղբյուրագիտական նշանակությամբ, վիմագրագիտական առանձնահատկություններով, այլև բովանդակային յուրօրինակ ու հետաքրքիր արտահայտչականությամբ: Մեծապես կարևորելով այսօրինակ վիմագրերի հավուր պատշաճի քննությունն ու հրապարակումը, նպատակահարմար նկատեցինք առանձին հոդվածաշարով անդրադառնալ այդպիսի արձանագրություններին<sup>1</sup>:

1. Կոտայքի մարզի Գողթն գյուղի դպրոցում է գտնվում դեռևս 1980-ական թվականներին բնակավայրից բավական հեռու գտնվող հուշարձանի ավերակներից բերված երկլանջ մի տապանաքար, երկու կտորից, մեկ նիստին՝ 3, մյուսին՝ 2 տող, հիշատակագրությամբ.

		+Մ Ի Ի (ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ(Յ)ՈՅ, ԵՄ՝ ՇԱՐՎԵՆ, ՈՐԴԻ ԱՏՈՍՈ, ԹԵՐԱԿԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՎ՝
		ԺԷ(17) ԱՄԻ ՓՈՒԹ(ՅԱՅ ԱՇԽԱ(Հ)ԷՍ, ԶԻՍ ՅԱՂԱԻ(ԹՍ ՅԻՇԵՑԷՔ:


Առաջին տողը մասամբ եղծված է: Տողի սկզբում տառաչափ խաչ է փորագրված, այնուհետև ուրվագծվում է Մ տառ, որը, դատելով դժվարությամբ վերձանվող ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ բառակապակցությունից՝ թվականակիր հարյուրավորը կարող է լինել: Մ-ին հաջորդում է առնվազն երկու տառատեղ, որոնք, տրամաբանությամբ, թվականի տասնավորը և միավորը պետք է լինեին: Եթե մեր ենթադրությունը ճիշտ լինի, ապա կարող ենք փաստել, որ գործ ունենք հայոց մեծ թվականով թվագրված վաղագույն (VIII դ.) երկրորդ արձանագրության հետ [մյուսը՝ Թալինի ՄԼԲ (783) թվականի Ուխտայտուր վանականի վկայագիրն է, որին մասամբ նման է նաև տառաձևերով՝ չնայած դրանք ավելի հարազատ են Թալինի Մայր տաճարից Խաչիկ Դաղյանի կողմից էջմիածին տարված ՅԾ (901) թվականակիր արձանագրությանը]: Մենք պայմանական ենք վիմագիրը

<sup>1</sup> Հոդվածաշարի առաջին հրապարակումը տե՛ս՝ Գ ա գ ի կ Գ. Մ ա ր գ ս յ ա ն. Վիմագրագիտական էսքիզներ.– ՊԲՀ, 2008, -2, էջ 198–209:

թվագրում VIII դարով, քանի որ, կախված տասնավորից և միավորից, այն կարող է թվագրվել նաև IX դարի առաջին կեսով:

Ինչպես պատանի հանգուցյալի, այնպես էլ նրա հոր անունները ժամանակի սկզբնաղբյուրներում հիշատակված չեն: Հատկապես սակավադեպ է Շարվեն անձնանունը: Այն մեկ անգամ նշված է 1296 թ. ընդօրինակված մի Ավետարանի հիշատակարանում<sup>2</sup>:

2. Գեղարդավանքի շինարարական-նորոգչական արձանագրություններից իր բնույթով ու նշանակությամբ կարևորում, ըստ այդմ էլ նպատակահարմար ենք գտնում ներկայացնել խաչքարային մի վկայագիր: Կաթողիկե եկեղեցու հարավային պատին՝ մուտքի վերևում՝ պատի մեջ, ագուցված է խիստ փոքր չափի, սպիտակադեղնավուն մարմարից կերտված մի խաչքար: Հիմնախաչի կողերին և ստորև փորագրված է 8 տողից, բավական վայելչագիր, հապավումներով հարուստ արձանագրություն.



ՅՄ ՔՍ

Ի ԹՎ(ԻՆ(

Ռ

Ղ

Ա (1642)

ՄԲ Խ(Ա(Չ(Ա(

ԹԱՐԻՂՈՒԼՈՒՆ: ԴՈՒԼԱԹԽ

Ա(Ն(ՈՒ(Մ(ԻՆ: ՏՐ ՍԱՐԳԻՍ

ՇԻ(Ն(ԵՑԱԻ ՄԲ ԵԿԵ(ՂԵ(ՑԻ(Ա(:

Այն, որ Գլխավոր տաճարը դարերի ընթացքում քանիցս մեծ ու փոքր նորոգումների և վերակառուցումների է ենթարկվել, պարզորոշ նկատվում է ներկայիս շարվածքից, մասնավորապես բազմաթիվ արձանագրությունների հատվածների անորոշ տեղաբախումից: Այս խաչքարային հիշատակագրությունը, թերևս, փաստում է այդօրինակ գործընթացներից մեկը, որն իրականացվել է 1679 թ. հզոր երկրաշարժից 37 տարի առաջ: Չնայած տեր Սարգսի կատարած բնորոշված է «շինել» բառով, անտարակույս, դա վերաբերում է եկեղեցու նորոգմանը կամ վերակառուցմանը: Վիմագրում հիշված անձանցից առաջին երկուսը, հավանաբար, աշխատանքի նպաստավորողներն են, որոնց անվամբ կերտվել է խաչքարը, իսկ տեր Սարգիսը՝ իրագործողը: Արդ. ովքե՞ր են վիմագրում հիշված անձինք: Գեղարդավանքի և շրջակա հուշարձանների վիմագրերում ու տարածաշրջանի գրչության օջախներում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում այդ անունները վկայված չեն:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 809:



XVII դարի 50-ական թվականներին Պարսկաստանի հայաշատ Ասպահան (Շոշ, Սպահան) քաղաքում Աստվածատուր գրիչը Փիլիպոսի պատվերով ընդօրինակում է երեք ձեռագիր. Հայսմավուրք (1651 թ.) և երկու Ավետարան (1654, 1657 թթ.): Հիշատակարաններում նշված են Փիլիպոսի բոլոր հարազատները, այդ թվում՝ ծնողներ Կարապետը և Դովլաթխանումը, մայրական կողմից պապ մահտեսի Թարիղուլը և նրա եղբայր տր-Սարգիսը<sup>3</sup>: Նշված անունների և ժամանակաշրջանի համապատասխանությունը մեզ հնարավորություն է տալիս ասպահանցիների և մեր վիմագրում առկա անձանց նույնացման աղերսներ տեսնել: Այսօրինակ երևույթը միանգամայն հարիր է միջնադարյան հայ իրականությանը՝ այլ երկրներից կամ Հայաստանի հեռու և մոտիկ գավառներից որևէ նշանավոր վանք այցելելն ու նվիրատվություն անելը:

3. Գեղարդավանքի ոչ վաղ անցյալի պատմության համար կարևոր ենք համարում նաև Գլխավոր տաճարի հարավային պատին զետեղված մեկ այլ արձանագրություն՝ փորագրված կարմիր տուֆաքարին, բաղկացած 8 տողից.

ԲԱՇԳՐԱՌՆԵՑԻ ԱՊՐԱՍ ԱՎԱ  
 ԴԵՆՆ ԸՆԾԱՅԵՑ ՇԻՆՈՒՇԻՍՈ  
 ՄՆԹԻ Է ԵՐԵԱՆՑԻ ՄԿՐՏԻՉ  
 ՏՐԻԱՌԱՔԵԼԵԱՆՆ 50ՄՆԹ  
 ՔՈՐԴԱԼԻԱ ՇՐՊԱԳՆ ՁՈՐ  
 ԲԵՐԷԼՈՒ ՕԳՆՈՒԻՆ ԱՐԷՑ  
 ԵՐԱՔՈ ՄՍՏՕՅԵԱՆԸ ԿՈ  
 ԱՄ ԶՐԻԹԱՌԱՅԵՑՎԷԻՆ

ԲԱՇԳ(ԱՌՆԵՑԻ ԱՊՐ(Ա( Հ(ԱՄ Ա-  
 ՎԱ  
 ԳԵԱՆ ԸՆԾԱՅԵՑ ՇԻՆՈՒ(Թ(ԵԱՆ(  
 100  
 Մ(Ա( Ն(ԵԹ ԵԻ ԵՐԵ((ԻԱՆՑԻ  
 ՄԿՐՏԻՉ  
 50 ԱՌԱՔԵԼԵԱՆՆ՝ 50 Մ(Ա(Ն(ԵԹ,


Արձանագրությունը, հավանաբար, վերաբերում է XIX դ. երկրորդ կեսին կամ XX սկզբներին կատարված նորոգումներին: Գառնեցի Աբրահամ Ավագյանը եկեղեցու շինարարության (նորոգման) համար նվիրում է 100 մանեթ, իսկ երևանցի Մկրտիչ Տեր-Առաքելյանը՝ 50 մանեթ: Կարծում ենք, որ մանեթը ռուսական ռուբլին էր, իսկ 150 ռուբլին տվյալ ժամանակի համար բավական մեծ գումար էր, քանի որ, օրինակ, մեկ կովը արժեք 3-4 ռուբլի:

Ուշագրավ է նվիրատուների կողքին հիշված երկու քրդերի առկայությունը. Ալի Աշրապ Բագը (հավանաբար, բեկ կամ բեգ) վանքի տարածք ջուր է անցկացրել, իսկ Բաթո Մստոյանը նշում է իր երեսնամյա անվճար ծառայությունը վանքին:

4. Կոտայքի մարզի Առինջ գյուղից մոտ 1 կմ հարավ-արևելք գտնվող հանրահայտ Ձագավանք հուշարձանախմբի գլխավոր եկեղեցու որմին, 3

<sup>3</sup> Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.). հ. Գ, կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984, էջ 441, 593, 792:

քարերի վրա, փորագրված է եղել 7 տողանոց մի արձանագրություն: Քարերից առաջին երկուսն ընկած են եղել (գտնվել են ավերակների մեջ):



ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ՍԱՄՈՒԷԼՍ, ՈՐԴԻ ՎԱՀՐԱՄԱՇԿԱՆ  
ԳՆԵՑԻ ԶԻԹԱՀԱՆԱՑ ԲԱԿԻՆ ՏԵՂՆ ՄԼՔԱ ՏԻՐՈՋԷՆ ԵՒ  
ՇԻՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ ՎԱԽՈՒՄՆ ԶԻԹԱՀԱՆՔՆ ԶԻՄ ՏՈՒՆ  
ԶԻՄ ԲՈՂՉԷՆ ԵՒ ԶՄԱՐՏԻՐՈՍԻ ԲՈՂՉԷՆ ՈՐ ԳՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ  
ԳԵՏԱԴԱՐԶ ՍԲ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ  
ԿԱՏԱ ԲՈՂՔՆ ԱԻՐՀՆԻՆ ԱՅ, ՈՐ ԽԱԲԱՆԻ ԳՃԺԸ (318) ՀԱՅՐԱՊԵՏ  
ԱՅ ...ԱՆ...<sup>4</sup>:

Նախորդ հրատարակիչ Ռ. Գասպարյանը գտնում է, որ ՇԻՆԵՑԻ բառը պետք է հասկանալ «վերակառուցել, վերաշինել» իմաստով, երկրորդ տողի վերջում կարդացել է ՄԼՔԱՏԻ, երրորդ տողում ՏՎԻ-ից հետո ՎԱԽՍ...ՈՒՄՆ, ԶՄԱՐՏԻՐՈՍԻ-ց հետո՝ ԲԱՂՉԷՆ: Նա ներկայացրել է միայն եռաքար արձանագրության առաջին երկու քարերն ընդգրկող հատվածը, իսկ երրորդ, իր նախնական տեղում գտնվող քարի հատվածը՝ ՇԿԱՆ / ՈՋԷՆ ԵՒ / ԶԻՄ ՏՈՒՆ / ԳՆԵՑԻ ԵՒ ՏՎԻ / ԱՅ ԻՄՈՑ ԵՒ / ԱՅՐԱՊԵՏ, վերծանված չէ: Երրորդ քարին զետեղված հատվածի համադրումից պարզվում է, որ Սամուելի հոր անունը եղել է Վահրամաշկ: Երկրորդ տողում, ՏԵՂՆ բառից հետո հրատարակիչը կարդացել է ՄԼՔԱՏ անձնանունը՝ անհաղորդ լինելով հաջորդող ՏԻՐՈՋԷՆ բառին: Կարծում ենք, այստեղ վկայված է «մուլք» - ունեցվածք, սեփականություն բառերը, այսինքն՝ ձիրհանքի տեղը, գտնվելու վայրը գնվել է դրա տիրուցից:

Սամուելը երկիցս վկայված է ձեռագիր հիշատակարաններում որպես պատվիրատու – ստացող: Աղջոց վանքում Գալուստ գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «...Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականիս

<sup>4</sup> Ռ. Գ ա ս պ ա ը յ ա ն. Չագավանքի համալիրը և նրա վիմագրերը.– ՊԲՀ, 2007, -1, էջ 206:

Հայոց ՊՂԲ (1443)... մեր Սամուէլ մահդասի և ամուսին իմ Փաշիկ, ստացար զսուրբ Աւետարանս յիշատակ մեզ, և ծնաւոյց իմոց՝ հաւրն իմ Վարհամշին և մաւրն իմ Աւսախաթունին, և եղբարն իմ Ծատուրին, և զաւակին իմոյ փոխեցելոյն ի Քրիստոս Մանուէլին, և այլ ամենայն մերձաւորաց<sup>5</sup>: Սամուէլ մահտեսին ձեռագիրը նվիրում է Աղջոց վանքի վանահայր Վարդիկին:

Հաջորդ վկայությունը գետեղված է Եղվարդում 1464 թ. գրիչ Մաթեոսի ընդօրինակած Մաշտոց ձեռագրի հիշատակարանում. «Արդ, ցանկացող եղև այսմ գրոցս՝ Մաշտոցիս Սամուէլ մահդասիս, և ետ գրել իմոյ տկարութեանս յիշատակ իւր, և բարի ծնողաց իւրոց՝ հաւրն Վահրամշկան և մաւրն Աւսախաթունին, և կենակցին Փաշկան... Եւ զՄաշտոցս զայս ետ ի դուռն սուրբ Կարապետին Յոհաննու վանից...»<sup>6</sup>: Սամուէլի պատվիրած ձեռագիրը նվիրվել է Հովհաննավանքին:

Սամուէլը հիշատակված է նաև Չագավանքում 1481 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում: Ձեռագրի պատվիրատուն է Սամուէլ մահդասու քրոջ՝ Դիշատի դուստր Դաւլատը, իսկ գրիչը, վերջինիս ամուսին Յովաննէս արեղան: Այստեղ հիշված են նաև Դաւլատի շատ հարազատներ. նրա եղբայրներ Ամիրգուլը և Վարձիգուլը, առաջինի որդի Սարգիսը, երկրորդի որդի Աթանաս դպիրը, Դաւլատի երկրորդ ամուսին Մկրտիչը և նրա դուստր՝ Բէկիխաթունը, Դաւլատ և Յովաննէս ամուսինների զավակներ Վահրամշահը, Մկրտիչը, Թուխտորը և Թամսիկը<sup>7</sup>:

Այս մատենագրական վկայությունները ցույց են տալիս, որ Սամուէլը, 1440–1460-ական թվականներին լինելով մեծահարուստ՝ շատ բարեգործություններ է կատարել: Այդ պատվարեր գործում նրան ընդօրինակել է նաև քրոջ դուստրը:

5. Հայ քարգործ վարպետների և ճարտարապետների փաղանգի արժանահիշատակ ներկայացուցիչներից մեկն է Վեցիկը, որի անձի և գործունեության մասին Կեչառիսում պահպանվել է միակ վկայագիրը: Անվանի վիմագրագետ Ս. Բարխուդարյանի քննախույզ ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վեցիկ ճարտարապետի ձեռքով կառուցվել է ոչ միայն վանքի Ս. Կաթողիկէ եկեղեցին, այլև գավիթը, Ս. Հարություն եկեղեցին:

Թեղենյաց վանքի գավթի հյուսիսային պատին, ներքուստ, պահպանվել է 6 տողից մի արձանագրություն, որում նվիրատուի դերում հանդես է գալիս Վեցիկը: Վկայագրի տողերի սկզբնահատվածը մասամբ եղծված է, սակայն, հիմնականում վերականգնելի է: Նվիրատուի անվան եզակիությունը աշխարհագրական միջավայրը հնար են տալիս կարծելու, որ վիմագրում հիշված Վեցիկը Կեչառիսի հանրահայտ ճարտարապետն է: Ցայժմ, այս շնորհաշատ վարդապետի մասին միակ վկայությունը, ինչպես նշեցինք, Կեչառիսում իր հիշատակին հարազատների կողմից կանգնեցված խաչքարի արձանագրությունն է: Թեղենյաց վանքի նորահայտ վկայագիրը

<sup>5</sup> ՄԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 400–401:

<sup>6</sup> ՄԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 216:

<sup>7</sup> ՄԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, էջ 14:

կարևորվում է նաև որպես սկզբնաղբյուր Վեցիկի, թերևս, նաև նրա ընտանիքի սոցիալական կարգավիճակի, Երևանում, ինչու ոչ նաև այլ վայրերում ունեցած կալվածքների մասին՝ դրանով իսկ որոշակիորեն լրացնում նշանավոր գործչի վերաբերյալ մեր գիտելիքները:

ՍՎԵՑԻԿԵՏՈՒԶ ԻՄԴՐԱՄԱՅԳԻՆ  
ԵԻԱՆԷԻՍԲՈՒԽՏՍԱԹԵՂԵՆԵԱՑ  
ԵԿԵՂԵՑՈՅՍԿԱՐԳԵՑԻՆԻՏԱՐ  
ՁԱՄՅԵՏՁԱՏԿԻՆՇԱԲԱԹՆ  
ԻՄԿԱՏԱՐ ԻՆԿԱՏԱՐԻՉՔԳՐ  
ՈՅՍԱԲՀՆԵԱԼ ՑԻՆԻՑԱՅ

(ԵՍ ՎԵՑԻԿ ԵՏՈՒ ԶԻՄ ԴՐԱՄԱՅԳԻՆ,

(ՈՐ ՅԵՐ(ԵԻԱՆ Է Ի **ՍԲ** ՈՒԽՏՍ ԹԵՂԵՆԵԱՑ,

(ԱՌԱՋՆՈՐԴՔ ԵԿԵ(ՂԵՑՈՅՍ ԿԱՐԳԵՑԻՆ Ի ՏԱՐ

(ՈՋՆ Ժ(ԱՄ ՅԵՏ ՁԱՏԿԻՆ ՇԱԲԱԹՆ

(ԱԻՐ ՅԱՆՈՒՆ( ԻՄ ԿԱՏԱՐԻՆ, ԿԱՏԱՐԻՉՔ ԳՐ

ՈՅՍ ԱԻՐՀՆԵԱԼ (ԵՂԻՑ(ԻՆ **ՑԱՅ**:

6. Թեղենյաց վանքի ուշադրության արժանի վիմագրերից է գավթի հյուսիսարևելյան սյան հյուսիսասիայաց կամարին փորագրված 13 տողից արձանագրությունը.

ՁԻԿ:ՉԹ:ԿԱՄԱԻՆԱՅ  
ԵՍՏ'': ՏԵՑԻՔՈՒՐԴ  
ՈՐԴԻՄՊ՝ ՏԱԼԱԲԱ  
ԵՑԱԻՄ ՌԽՏՍԱԹԵՂԵ  
ԵԱՑԵՏՈՒԻԱՅԳԻԻՇ  
ԵԳԱԻԹԵԻ՝ Ղ՝ԱԱՐ  
ՔԵՏՈՒՆԻՏԱԻՆ:Ը:ԱԻ  
ՁԱԻՏԱԵՆԻՄՍԱՐԳՍԻՆ  
:Բ: ԻՆՁ:Բ:ԻՄԿԵՆ ԱԿՑ  
ԻՆՏԻԿՆԱՑՏԻԿՆԱ  
:Բ: ԻՄԱԻՐՆ:Բ: ԽՈՑԱ  
ԴԵՂԻՆԿԱՏԱՐԻՉՔԳ  
ՐՈՅՍԱԻՐՀՆԻՆՑԱՅ

Ի ԹԻ(Ա((ԿԱՆԻՍ( :ՉԹ: (1260), ԿԱՄԱԻՆ **ԱՅ**,

ԵՍ Տ(ԱՊԱ(ՏԵՑԻ ՔՈՒՐԴ,

ՈՐԴԻ ՍՄՊԱՏԱ ՄԻԱԲԱՆ

ԵՑԱ Ի **ՍԲ** ՈՒԽՏՍ ԹԵՂԵՆ-

ԵԱՑ ԵՏՈՒԻ ԱՅԳԻ Ի Շ

ԵՆԳԱԻԹԵ ԵԻ (ՄՊԱ(ՍԱԻՈՐ

ՔՍ ԵՏՈՒՆ Ի ՏԱՐԻՆ :Ը: ԱԻՐ

ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ **ՍԲ** ՍԱՐԳՍԻՆ

:Բ: ԻՆՁ, :Բ: ԻՄ ԿԵՆԱԿՑ

ԻՆ՝ ՏԻԿՆԱՆՑՏԻԿՆ,


Ա, :Բ: ԻՄ ՄԱԻՐՆ :Բ: ԽՈՑԱ-

ԴԵՂԻՆ, ԿԱՏԱՐԻՉՔ Գ

ՐՈՅՍ ԱԻՐՀՆԻՆ **ՑԱՅ**:

Քուրդ Տապատեցին, հավանաբար, մեծահարուստ, թերևս ոչ իշխանական ծագմամբ (այլ կերպ կնշվեր նրա իշխող դասին պատկանելիությունը) նվիրատու է: Ուշագրավ է նրա որտեղացի լինելը վկայող տեղանունը, որը մասամբ եղծված է, սակայն դյուրությամբ վերականգնվում է նույն Քրդի՝ Նեղուցի վանքի գավթի որմին փորագրված նվիրագրի հիման վրա: Մեզ հայտնի է այս տեղանվան մեկ հիշատակություն՝ պահպանված Մովսես Կաղանկատվացու երկում որպես ավան, Տափատ ձևով:

7. Քուրդ Տապատեցու երկրորդ արձանագրությունը փորագրված է Նեղուցի վանքի գավթի հյուսիսարևելյան սյան խոյակի արևմտահայաց և հարավահայաց երեսներին, 5 տող:




ԿԱՄԱԷՆ ԱՅ, ԵՍ՝ ՏԱՂ  
ԱՏԵՑԻ ՔՈՒՐԴՍ ԵՒ ԱՍ  
ՈՒՍԻՆ ԻՄ ՏԻԿՆԱՅՏԻԿԻՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՐԲՈՑՍ ԵՒ ԱԻԳՆԵՑԱՔ  
ԺԱՄԱՏԱՆՍ, ՄԻԱԲԱՆՔՍ ԽՈ  
ՍՏԱՑԱՔ Ի (ՏԱՐԻՆ :Դ: ԱԻՐ ԺԱՍ ՔՐԴԻՆ :Բ: ՏԻԿՆԱ  
ՅՏԻԿՆԱ( Ի ՏԱԻՆԻ ՍԲ ՅԱԿ(ՈԲԱ( ԱՆԽԱՓԱՆ:

Տապատ տեղանունը մեզ անհայտ է: Արցախի Բերձոր գավառում հիշատակված է Տափատ բնակավայրը<sup>8</sup>. միզուցե սա հենց նույն Տապատն է: Թեղենյաց վանքի նվիրագիրը թվագրված է 1260 թ., կարծում ենք, մեր վկայագիրը նույնպես կարող ենք մտտավորապես այդ ժամանակով թվագրել և բնորոշել որպես շինարարական-նվիրատվական:

8.Մատենագրական ու վիմագիր սկզբնաղբյուրներից հայտնի է,որ Բջնիի Ս.Աստվածածին եկեղեցին որպես եպիսկոպոսական թեմի կենտրոն հիմնադրել է ռազմաքաղաքական նշանավոր գործիչ, գիտնական Գրիգոր Վասակյան Պահլավունի իշխանաց իշխանը, և այդ իրողությունն արձանագրված է եկեղեցու հարավային պատին փորագրագրված ընդարձակ վկայագրում: Այդ նշանավոր իշխանի հեղինակությամբ կամ նրա անվան հիշատակմամբ բավական սակավ են վիմագրական վկայությունները,ուստի այդօրինակ յուրաքանչյուր նորահայտ քարեղեն վկայագիր աղբյուրագիտական մեծ արժեք և հետաքրքրություն է ներկայացնում:Վիմագրական պրպտումների արդյունքում մեզ հաջողվեց «նկատել» Գրիգոր իշխանի վերաբերյալ ևս մի արձանագրություն՝ փորագրված Ս. Աստվածածին

<sup>8</sup> Մովսես Կաղանկատվացու երկում հիշված է Տափատ տեղանունը որպես Արցախի Բերդաձոր գավառի ավան (Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ն ռ ա յ ճ ի Պատմության Աղրուանից Աշխարհի, Երևան, 1983, էջ 327):

եկեղեցու հյուսիսային որմնամույթի խոյակի արևելակողմում, բաղկացած 3 տողից.



ՅՄ ՔՄ ՈՂՈՐՄԵ ԱԳ

ԻԳՈՐՈ ԻՇԽԱՆԱՑ ԻՇ

ԽԱՆԻ, ՈՐԴՈ ՎԱՍԱԿԱ[Ի]:

Անշուշտ, վիմագիրը վերաբերում է հանրահայտ գորավար ու գիտնական Գրիգոր Մագիստրոս Վասակյանին: Նկատառելով հիշատակման ձևը՝ այն փորագրվել է նրա մահվանից հետո կամ այդ կապակցությամբ, ուստի կարելի է թվագրել XI դարի 50–60-ական թվականներով: Մակայն, այս պարագայում, խնդիր է ծագում, թե ինչու նշված չէ նրա «մագիստրոս» տիտղոսը: Կարծում ենք, որ այստեղ դեր է խաղացել այն հանգամանքը, որ Բջնիի եկեղեցին կառուցել է դեռևս մագիստրոսի կոչում չստացած Գրիգոր Վասակյան Բջնեցին և արձանագրությունը փորագրողների հիշողության մեջ նա մնացել է այդպիսին:

9. Բջնիի վիմագրական հավաքածուից այստեղ նպատակահարմար ենք գտնում գետեղել ևս մի վկայագիր՝ փորագրված եկեղեցու հյուսիսային պատին, արտաքուստ, թեք քիվերի հատման անկյունում, հավերժության նշանի ներքևում, 3 տող.

ՉՏԻՎ ՐԹԱՆ

Չ ՏԻ ՎՐԹԱՆ

ԷՍՅԻ ՇԵՍԵԻ  
Ք Ի ՔՍ

ԷՍ ՅԻՇԵՍՁԻ

Ք Ի ՔՍ:

Սա նույն Վրթանես եպիսկոպոսն է, որ XIII դարի 10-ական թվականներին վանքի միաբանների համար կառուցել է բնակարաններ: Եղել է ոչ միայն վանքի, այլև Արարատյան թեմի առաջնորդը, մասնակիցը Լոռիի և Անիի եկեղեցական ժողովների: Կիրակոս Գանձակեցին Վրթանեսի մասին մի ուշագրավ փաստ է հիշում. «Իբրև տեսին վարդապետք և եպիսկոպոսք կողմանցն Աղուանից, եթե բարձաւ կաթողիկոսութիւնն ի նոցանէ և ոչ կայ յազգէն յայնմանէ եպիսկոպոս կամ քահանայ, բայց միայն մանուկ մի սարկաւագ, առեալ զնա՝ տարան ի Բջնի առ եպիսկոպոսն Վրթանէս և տան ձեռնադրել զնա քահանա»<sup>9</sup>: Խոսքը վերաբերում է հետագայում Աղվանից կաթողիկոս ընտրված Հովհաննեսին: Վրթանեսի թեմակալությունը շարունակվել է առնվազն մինչև 1217 թ.: Այդ թվականին Այրիվանքում ընդօրինակված ավետարանի հիշատակարանում գրիչ Աբելը վկայում է. «Ի մերում ժամանակի երկուք հովուապետք հան[դ]իպեցան բարիոքք և

<sup>9</sup> Կ ի Ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 181:

Ճշմարիտք՝ տեառն Վրթանիս ի կողմն Վարաժնունեաց, որ առ Հրագրան գետով՝  
և այսր և անդր պարփակեալ են շինանիս/տք լայնքը ընդարձակք, ունելով զվայրս  
բերրի յոյժ, և տեառն Դաւիթ ի կողմն Խոսարովակերտի...»<sup>10</sup>:

10. Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցուն հարավային կողմից (պատի արևելյան  
հաստվածում) կցված է ուղղանկյուն հատակագծով, երկթեք տանիքով փոքր զանգա-  
կատուն: Մուտքը հարավային կողմից է: Արևմտյան պատը հարդարված է որմի մեջ  
ազուցված հրաշաքանդակ մի խաչքարով: Այն իր քանդակագարդմամբ գրեթե  
կրկնում է Թեղենյաց և Նեղուցի վանքերում պեղումների ժամանակ հայտնաբերված  
խաչքարի<sup>11</sup> հարդարանքը, այն աստիճան, որ, գրեթե համոզված ենք, որ դրանք նույն  
քարգործի կերտած կոթողներն են: Չանգակատան կառուցման ժամանակը փաստող  
վկայագիր առկա չէ: Կառուցի հարավային պատին, քիվի վրա զետեղված է մեկ տո-  
ղից արձանագրություն, որը, կարծում ենք, վերաբերում է զանգակատան շինարա-  
րությանը.

Ի ԹՎ(ԻՆ) :ՉԻԱ: (1272), (ՅԻՇ)ԵՑԷՔ ՉՍԵՁ Ի ՔՍ:

Չանգակատան հարավային և արևմտյան պատերին պահպանվել են բազմաթիվ  
մանր հիշատակագրություններ, որոնք սակայն ուշ շրջանի գրվածքներ են:

11. Նեղուցի վանքի աղբյուրագիտական կարևոր նշանակությամբ վիմագրերից է  
գավթի արևելյան պատին, եկեղեցի տանող մուտքի հյուսիսային կողմում փորագր-  
ված 10 տողանոց նվիրագիրը.

ԿԱՄԱԻՆ ԱՅԵՍԱՆԻՐ  
ՊԵԿ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ  
ՍԱՀՄԱՏԻՆԻ, ՅԱՌ  
ԱՋՆՈՐԴՈՒԹԵ(ԱՆ)  
ՏՐՅՈՅԷԼԻԱԿՆ  
ԵՑԱՄ ԱԾԱԾ  
ԵՒ ՍՊԱՍԱԵՅՐԲ  
ՄԻՈՍՏԱՅԱ:Դ:  
ԱԻԲ ԱՄԵՆՐԱ  
ԱՆԿԱՌՈՒՄԻՆ

ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ԱՄԻՐ-  
ՊԵԿ ՈՐԴԻ ՊԱՐՈՆ  
ՍԱՀՄԱՏԻՆԻ, ՅԱՌ  
ԱՋՆՈՐԴՈՒԹԵ(ԱՆ)  
ՏՐ ՅՈՅ(ԱՆԿՍ(Ի ՄԻԱԲԱՆ  
ԵՑԱ ԱԲ ԱԾԱԾ  
ՆԻ ԵՒ ՍՊԱՍԱԵՅՐԲ  
Մ ՄՈՍՏԱՅԱՆ :Դ:  
ԱԻԲ ԺԱՄ ԻՄ ՄԱԻՐՆ՝ Ս  
ԱՄԱԽԱԹՈՒՆԻՆ. ԱՄԷՆ:

<sup>10</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 106:  
<sup>11</sup> Թեղենյաց վանքինը կոթողի վերին կեսն է, իսկ Նեղուցինը՝ քիվը:

Մեծահարուստ պարոն Սահմատինը ժամանակի հայտնի քաղաքական, վարչական գործիչներից է եղել: XIII դարի 60–80-ական թվականներին հանդիսացել է Անիի պատրոն-կառավարիչներից մեկը (Սահիպ Դիվանի հետ): Նրա անվան հիշատակությամբ բազմաթիվ արձանագրություններ են պահպանվել Երևանում, Անիում, Մրենում, Կարմիր վանքում, Հովհաննավանքում: Նա խոշոր նվիրատվություններ է կատարել վանքերին: Այստեղ առաջին անգամ հիշատակվում է Սահմատինի Ամիրպեկ որդին: Վիմագիրը կարելի թվագրել XIII դարի 80–90-ական թվականներով:

12. Մաքրավանք հուշարձանախումբը գտնվում է Հրազդան քաղաքի համանուն թաղամասում, բաղկացած է երկու եկեղեցիներից և գավթից: Մատենագրական սկզբնաղբյուրներում վանքի մասին վկայություններ չեն պահպանվել և նրա հիմնադրման, գործունեության մասին տեղեկանում ենք համակառույցի որմերին և կոթողների վրա առկա բազմաթիվ արձանագրություններից: Այստեղ նպատակահարմար ենք գտնում զետեղել գլխավոր՝ Ս. Կաթողիկե եկեղեցու շինարարական-նվիրատվական վկայագիրը, որը փորագրված է ներսում, հարավային ավանդատան մուտքի վերևում, բաղկացած է 10 տողից.

ԿԱՄԱՆՅԵՍՍՊԱՏԻՇԻԱՆԵՒՄՈՒՄԻՆ  
ԻՄՇԱՀԱՆՈՒՄԻՍԵՒՄԻՔԻՒՄՎԱՍԱԿԵՒ  
ԲԵՏԱԷԼԱՏՈՒԱՔԻՄԵՐԱՐԴԵԱՆՑԻ  
ՇԻՆՈՒԹԻՄԲԿԱԹՈՂԿԵՍԵ ՅԳԵԾ  
ԳԵԹՐՈՆԵԿՆՊՍԱՆՍԳՆՈՒՄԱՌԱԶՆ  
ՈՐՄ ՅՈՎԱԷՍՎԴԵԻՄԱՔԱՆՔՍԵՏՈՒՆ  
ԶԵԿԵՂԵՑԻՔՍԻՄՈՒԱՔՄԻՍԻԱՆՍԻՄԻ  
ԱԶԻՆԻՄԵՐԵ ԶՊԱՄԱԳԵԼՈՎԱՓՆԷ  
ԿԱԶԱՅԳԻՆՎԵՑՈՒՄԱԻՍՆԱԿԻՑԷՈՎ:  
ԹԻՆԻՆՎԱՅՐՈՒԹԵՍԱՆՈՐԷԱՄԻՆ ԳՐԵՑԱԻ  
ԱԿԱՏ ԻՄՏՈԳՈՅԱՐԴՈՅՆ  
ՊԱՏ  
ԿԻՐ ԻՆՉԱԷՆՈՒՄՆ  
ՈՅԻՄՈՅՈ ԅՍ

ԿԱՄԱՆ ՄԵ ԵՍ՝ ՍՆՊԱՏ ԻՇԵԱՆ ԵՒ  
ԱՍՈՒՄԻՆ  
ԻՄ ՇԱՀԱՆՈՒԹԻՍ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՄ ՎԱՍԱԿ  
ԵՒ  
ԲԵՏԱԷԼԱՍ, ՏՈՒԱՔ Ի ՄԵՐ ԱՐԴԵԱՆՑ Ի  
ՇԻՆՈՒԹԻ(ԻՆ) ՄԲ ԿԱԹՈՂԻԿԷԻՄ ԵՒ  
ԱՅԳԻ  
ՄԵԾ  
ԳԵԹՐՈՆ Ի ԿՈՊ ՏԱՆՍ ԳԼՈՒԹՆ, ԱՌԱՋՆ  
ՈՐԴՄ ՅՈՎԱՆԷՍ Վ(ԱՐԴ)ԱՊԵՏ( ԵՒ  
ՄԻԱԲԱՆՔՍ ԵՏՈՒՆ  
ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԽՈՐԱՆԱԻՔՍ Ի ՏԱԻՆԻ ՄԲ  
Ի  
ԱԶԻՆ :Բ: ԱԻՐ ՄԵԶ ՊԱՏԱՐԱԳԵԼ, ՈՎ  
ԽԱՓԱՆԷ  
ԿԱՄ ԶԱՅԳԻՆ ՀԱՆԷ՝ ՅՈՒԴԱԻ

Մտքատր, հավանաբար, տեղական իշխանական տան ներկայացուցիչներից է, որը կնոջ և երկու որդիների հետ ոչ միայն օժանդակել է եկեղեցու շինարարությանը, այլև Գեթրոն գյուղից մի մեծ այգի է նվիրել, որը գտնվում է Ի ԿՈՊ ՏԱՆՍ ԳԼՈՒԹՆ: Գրաբարի բառարաններում «կոպ» կամ «կոփ» բառն առկա է միայն «աչքի կոպ» իմաստով, որն անհարիր է նշված բառակապակցության իմաստին: Միջնադարում օգտագործվել է «կոպար» բառը «եզր, սահման» բացատրությամբ<sup>12</sup>: Հնարավոր ենք գտնում, որ վիմագրի հեղինակն օգտագործել է նշված բառի կրճատ՝

<sup>12</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. առաջին, Երևան, 1979, էջ 1117:




«կոպ» ձևը: Այսինքն՝ նվիրվել է գյուղի, որը, հավանաբար, հիշյալ իշխանների նստոցն է եղել, իշխանական ապարանքի (տան) եզրին գտնվող այգին: Գեթրոնը, նաև՝ Կեղրոն, Քեթրոն, ներկայիս Կոտայքի մարզի Գետամեջ գյուղն է: Մեզ հայտնի սկզբնաղբյուրներուն սա գյուղի անվան հիշատակության վաղագույն վկայությունն է:

Վիմագրում որպես վանքի առաջնորդ նշված է Հովհաննես վարդապետը, իսկ որպես վանահայր՝ Անդրեասը: Վերջինս 1259 թ. իր և եղբոր հոգու բարեխոսության համար բախում մի խաչքար է կանգնեցրել:

Արձանագրության վերջում, նույն գրչի կողմից փորագրվել է ևս չորս տող, որոնք, չնայած մասամբ հողմնահարված են, սակայն դատելով ընթերցվող հատվածներից՝ վերաբերում են այլ վկայագրի:

13. Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի կենտրոնում է գտնվում IX դարի վերջերին Սյունյաց Սահակ իշխանի կառուցած Ս. Աստվածածին եկեղեցին: Ինչպես եկեղեցու որմերին, այնպես էլ շրջակա գերեզմանոցի տապանաքարերին ու խաչքարերին պահպանվել են բազմաթիվ ուշագրավ արձանագրություններ, որոնք հրատարակվել են «Իիվան հայ վիմագրության» համապատասխան հատորում:

2010 թ. վերականգնողական աշխատանքների առիթով եկեղեցու տարածքում իրականացվեցին պեղումներ: Հողաշերտից հայտնաբերվեցին ամբողջական ու բեկորային տապանաքարեր ու խաչքարեր՝ մի մասը արձանագրված: Աշխատանքների ընթացքում մեր ուշադրությունը գրավեց մի խաչքարի պատվանդան՝ դրված եկեղեցու ներսում, հարավային մուտքի մոտ, արևմտյան նիստին 3 տող արձանագրությամբ.




Ի Թ(ՎԱԿԱՆԻՆ( ՆԿԲ(1013), ԵՄ՝ ՄԱՐԻ(ԱՄ( Կ(ԱՆ(ԳՆ(Ե(ՑԻ ԶԽԱԶՍ  
Մ(Ի(Ք(Ա(ԷԼ,  
ԳՐ(Ի(Գ(ՈՐ( ՈՐԴԻՔ ԻՄ, ՄԻՆ ԱԻՐ Ի ՔՍ ՓՈԽԵՑ  
ԱՆ: Խ(Ա(Չ(Ս( ԲԱՐԵԽԱԻՍ (Է( ՄԱՐԴԻՆ:

Սա Նորատուսի Ս. Աստվածածին եկեղեցու երկու վաղագույն արձանագրություններից երկրորդն է [առաջինը ունի Խարիբի ՆԽԵ (996) թվին կանգնեցրած

խաչքարն է, որը գտնվում է Պատմության պետական թանգարանում]: Խաչքարը կանգնեցրել է ուն Մարիամ նույն օրը մահացած կամ զոհված որդիների՝ Միքայելի և Գրիգորի հիշատակին: Վիմագրի վերջին հատվածը փորագրված է այլ տառերով, ավելի ուշ: Մարդի գրվածքը, թերևս, վերաբերում է պատվանդանին, հիմնական վկայագրի ներքևում փորագրված թվով ինը խաչանշաններին:

14. Ջերմուկ քաղաքից մոտ 5 կմ արևելք, «Զիրաք» գյուղատեղի միջնադարյան գեղեզմանոցում պատվանդանին կանգնած է 210 x 95 սմ չափի մի գեղաքանդակ խաչքար: Հիմնախաչի երեք եզրագոտիներին և ստորին մասում մեկական տողով արձանագրությունն է.



ՅԱՆՈՒՆ ԱՅ

ԵՍ՝ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԽՈՅԱԴԵՂ ԿԱՆԳՆԵՑԱՔ

ԶԽԱԶՍ Ի ԲԱՐԵԽ(ԱԻ(ՍՈ(Ի(ԹԻ(ԻՆ ՈՐԴԵ(ԱՅ ԻՄՈՑ

Ի ԹՎ(Ա(Կ(ԱՆԻ(Ս

ՉԾ (1301):

Վկայագիրը մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի շարք առումներով: Նախ՝ կանգնեցնողի մասին: Առաջին հայացքից թվում է, թե խոսքը վերաբերում է «վարդապետ» հոգևոր աստիճանով Խոցադեղին: Սակայն կարելի էր բառակապակցությունն ընկալել երկու անձանց անկախության տեսանկյունից, նկատառելով հաջորդող ԿԱՆԳՆԵՑԱՔ (հոգնակի) բայը, այսինքն՝ ԵՍ՝ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ԽՈՅԱԴԵՂ, բայց այս դեպքում, գրեթե պարտադիր էր ԵԻ շաղկապի օգտագործումը: Այսօրինակ ընթերցմանը որոշակիորեն «խանգարում» է ՈՐԴԵԱՅ ԻՄՈՑ կապակցությունը, որը պարզորոշ վկայում է խաչքար կանգնեցնողի դերում մեկ անձի լինելը:

Մենք առավել հակված ենք որպես խաչքար կանգնեցնող տեսնել վարդապետ Խոցադեղին, իսկ «կանգնեցաք»-ը վերագրել այն հանգամանքին, որ Խոցադեղին այդ գործում օգնել կամ օգտակար են եղել նաև այլք, միգուցե հենց նշյալ «որդիները»: Այսինքն խնդրո առարկայում որոշիչ պետք է համարել ոչ թե «կանգնեցաք»-ը, այլ «որդեաց իմոց»-ը: Եթե հավաստի համարենք

խնդրի այսօրինակ մեկնաբանությունը, այսպես հարկ է փաստել, որ ավելի ճիշտ կլիներ «Ես Խոցադեղ վարդապետ» արտահայտչաձևը:

Արդ, անդրադառնանք «վարդապետ» բառեզրին և Խոցադեղ անձնանվանը: Եթե «վարդապետ»-ը դիտարկում ենք որպես եկեղեցու սպասավորի «գիտական աստիճան, որ մի ժամանակ, հատուկ քննությունից հետո, տալիս էին հոգևորականներին առանձին օրհնությամբ և վարդապետական գավազանով»<sup>13</sup>, այսպես, մեր կարծիքով դրան հակասում են առնվազն երկու հանգամանք՝ վիմագրում նշված «որդեաց իմոց» արտահայտությունը և Խոցադեղ խիստ «աշխարհիկ» անձնանունը:

Հանրահայտ է, որ եկեղեցու սպասավորների աստիճանակարգում, սկսած վարդապետից՝ կուսակրոն էին, այսինքն՝ նրանք որդի(ընդհանրապես՝ ընտանիք) ունենալ չէին կարող: Երկրորդ՝ անվան խնդրի կապակցությամբ հարկ է նշել, որ եկեղեցում ընդունված արարողակարգ էր, երբ որևէ անձ ձեռնադրվում էր հոգևորական, նրան տրվում էր եկեղեցուն հարիր անուն: Հատկապես այն դեպքերում, երբ տվյալ անձը կրում էր խիստ աշխարհիկ անուն, ինչպես, օրինակ մեր դեպքում: Այս հանգամանքները թույլ են տալիս որոշակի հիմնավորվածությամբ փաստել, որ «վարդապետ» բառեզրը ոչ հոգևոր աստիճան է, ոչ էլ անձնանուն:

Այս դեպքում, ինչպես և հասկանալ քննարկվող վիմագրում սույն բառեզրը: Միջնադարյան հայ իրականության մեջ «վարդապետ» բառով բնորոշվել են նաև քարգործության ու ճարտարվեստի լավագույն ներկայացուցիչները: Խնդրին հանգամանալից անդրադարձել է անվանի վիմագրագետ Մեդրակ Բարխուդարյանը<sup>14</sup>: Նա ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ սկսած վաղ միջնադարից, ճարտարապետներին կոչել են նաև վարդապետ: Այնուհետև նա մասնավորեցրել է. «XII դարից, երբ վարդապետ հասկացությունը բոլորովին մերվել էր կրոնավորի հասկացության հետ, ճարտարապետները այդ բառի միջից ջնջելով ա տառը, դարձնում են վարդապետ ձևի և բոլորովին նոր իմաստ հաղորդում վարդապետ-ին, այն է ճարտարապետ»<sup>15</sup>:

Վերը շարադրվածը մեզ հնար է տալիս հավաստելու, որ Խոցադեղը եղել է նշանավոր քարգործ կամ ճարտարապետ, թերևս, նույնիսկ տվյալ խաչքարի կերտողը: Ինչ վերաբերում է «վարդապետի» փոխարեն «վարդապետ» արտահայտչաձևին, հնարավոր է XII դարից հետո երբեմն օգտագործվել է «վարդապետ» բառը:


15. Սադոնասավանքը պատմական Արագածոտնի XII-XIII դդ. ամենաուշագրավ վանական համալիրներից մեկն է: Դրա շինարարությունն իրականացվել է Վաչուսյանների միջոցներով, որոնց Հայաստանը սելջուկներից ազատագրելու գործում ունեցած ծառայությունների համար Զաքարյան եղբայրները նվիրել էին Արագածոտնը: Վանքի գլխավոր շինություններից է

<sup>13</sup> Մ տ. Մ ա լ ի ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1945, էջ 309:

<sup>14</sup> Մ. Բ ա Ր խ ու ղ ա Ր յ ա ն. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 18-22:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 25:

1255 թ. կառուցված գրատունը, որի հարավային կողմի պատուհանի պսակին, արտաքուստ, գլխիվայր փորագրված է.



ՄԿ ՎԴ (Մկրտիչ վարդպետ):

Կասկածից վեր է, որ սույլալ դեպքում գործ ունենք վանքի գրատունը կառուցող ճարտարապետի անվան հետ: Մադոնսավանքում XIII դարում ընդօրինակված գրազագիր ձեռագրերի հիշատակարաններում Մկրտիչ անունը վկայված է երիցս՝ 1260-ականներին<sup>16</sup>: Դարի կեսերին այդ անունով վանահայր է հիշատակվում մերձակա Հովհաննավանքում: Չվիճարկելով վիմագրում հիշատակված Մկրտչի նույնականությունը մյուսների հետ՝ կարող ենք փաստել, որ նորահայտ վկայությամբ հայտնի է դառնում XIII դարի նոր ճարտարապետի անուն:

16. Հաջորդ ուշագրավ գտածոն հայտնի է դարձել վերջին տարիներին Տավուշի մարզի Կողբ գյուղի մերձակա «Տվարագեղցի» հուշարձանից: VI դարով թվագրվող այս եկեղեցում գտնվել և Կողբի թանգարան է տեղափոխվել քարե մի սալիկ, որի լավ հղկված երկու մակերեսներին փորագրվել է խիստ հետաքրքիր մի արձանագրություն: Այն սկսվում է սալիկի մի նիստին և շարունակվում մյուսին: Ցավոք, սալիկն ունի կոտրված հատվածներ, ինչի պատճառով վկայագրի վերծանությունը թերի է: Բովանդակությունից պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է վանքի հիմնարկությանը, որը տեղի է ունեցել 995 թ. Տաշիր-Չորագետի հայտնի թագավոր Դավիթ Անհողիների տիրապետության շրջանում: Համաձայն նորահայտ վկայագրի՝ փոխվում է պատմագիտության մեջ ընդունված տեսակետը Դավիթ Անհողիների կառավարման թվականի մասին, համաձայն որի՝ արքան սկսել է իշխել 996 թ.<sup>17</sup>:


Հարկ է նշել նաև, որ հայտնաբերված սալիկը եզակի օրինակ է, երբ արձանագրությունը փորագրվում է ոչ թե կառույցի որմին, այլ դարակի վրա դրվելու քարեղեն «տախտակին»: Քարե և աղյուսե սալիկների վրա արձանագրություններ փորագրելու տեխնիկան; Առաջավոր արևելքում հնագույն ավանդույթներ ունի: Ամենատարբեր բովանդակության տեքստեր էին փորագրում սալիկների վրա Շումերի և Աքադի գրիչները մ. թ. ա. III հազ. սկսած<sup>18</sup>:

<sup>16</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, էջ 349, 359, 478:


<sup>17</sup> Ռ. Բ. Մ ա թ և ն ս յ ա ն. Տաշիր-Չորագետ, Երևան, 1982, էջ 76-80, 110-111:

<sup>18</sup> М. А. Д а н д а м а е в. Вавилонские писцы. М., 1983, с. 30.

Հին Միջագետքում արձանագիր սալիկները պահվում էին դպրոցներում, արխիվներում և գրադարաններում<sup>19</sup>: Հայաստանի տարածքում փորագրված կավե սալիկների գյուտեր հայտնի են Կարմիր բլուրի պեղումներից<sup>20</sup>: Էլամերեն լեզվով արձանագրություններ ունեցող կավե երեք սալիկների բեկորներ են գտնվել Հայաստանի մայրաքաղաք Արմավիրի պեղումներից, որոնք թվագրվում են մ. թ. ա. V դարով<sup>21</sup>: Ինչպես հայտնի է, այս երևույթը բնորոշ չէ միջին դարերի համար, ուստի Կողբ գյուղից հայտնի դարձած օրինակը, ինքնին մեծ հետաքրքրություն է ներկայացնում:



Առաջին երեսին, 6 տող.  
+ : Լ : Խ : Դ : (995), Ի  
ԹԱԳԱ(ՎՈՐՈՒ( ...  
ԹԵ(ԱՆ( ԴԱԻԹԻ ԵՍ Պ.....  
ՈՒ ԱԾԻՏ ՇԻՆԵՑ(ԱՔ.....Ո  
ԻԽՏՍ ՅԱՆՈՒՆ ԻՍ Ե....  
... ՉԱԳՆ ՇԻՆ(ԵՑԱՔ(....



Երկրորդ երեսին, 7 տող.  
.....Ա.....  
...(ԳՐՈՅՍ ՀԱԿԱ(ՌԱԿ(.....  
:ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ...  
ՅԱՍԵՆԱՅՆ ՍԲՈՑ: ՁՆ.....  
ՈՒԴԱԻ ԱՌՑԷ ԵԻ Ձ.....  
ԱՆՍ ԿԱԵՆԻ ՊԱՐՏ...  
ՏԱՐՈՒՄՆ ԺԱՍ.....:

17. Ուշագրավ մի արձանագրություն է պահպանվել Սևանի թերակղզու վրա գտնվող վանական համալիրի գերեզմանատանը, որը մինչև օրս վրիպել է մասնագետ - ուսումնասիրողների ուշադրությունից: Այն փորագրված

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 27-29:  
<sup>20</sup> Б. Б. Пиотровский и Ванское царство (Урарту). М., 1959, с. 29.  
<sup>21</sup> Գ. Տիրացյան, Ի. Կարապետյան. Արմավիրի 1985-1986 թթ. պեղումները. - ՊԲՀ, 1988, -3, էջ 222, նկ. 2:

է երկթեք մի տապանաքարի հարավային նիստին, որն ամբողջովին քայքայված է և մամռակալած: Հիշատակագիրը մեկ տողից է.

:Ն:Ժ:Ը: (969) ԹԻՎԱԿ(ԱՆԻՍ, ԵՍ ՎԱՆԷՆԻ ԴՈՒՍ(SԸՆ ԱՇՈՏՈ):

Վանենի անձնանունը սկզբնաղբյուրներում վկայված է մի քանի անգամ: Անվան ամենավաղ հիշատակությունը վերաբերում է Ներսես Շնորհալու քրոջը, որն ամուսնացած էր Սասունի Վիգեն իշխանի որդու՝ Չորտուանել Գ-ի հետ: Մահացել է 1165 թ.<sup>22</sup>: Սկզբնաղբյուրներից հայտնի են ևս մի քանի վանենիներ, որոնք ապրել են XIII–XIV դդ.<sup>23</sup>: Սակայն, ինչպես՝ տեսնում ենք, մեզ հետաքրքրող Վանենին մահացել է 969 թ., այսինքն նախանշվածներից շատ ավելի վաղ: Համաձայն հիշատակագրի՝ նա դուստրն է ուն Աշոտի: Նշված ժամանակաշրջանում Աշոտ անձնանունը տարածված էր հատկապես Բագրատունյաց արքայատոհմի և Սյունիքի իշխանապետների մեջ: Սակայն ունե ը արդյոք նրանցից որևէ մեկը Վանենի անունով դուստր, հայտնի չէ: Հարկ է փաստել, որ սկզբնաղբյուրներում, հասկանալի պատճառներով, հիմնականում պահպանվել են արական սեռի անունները:

ՇԻՆԱԴԱՐԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՑ ՎԿԱՅԱԳՐԵՐ ՎԱՅՈՑ ՉՈՐԻՑ

Ինչպես ողջ Հայաստանի, այնպես էլ Սյունյաց աշխարհի համար աղետաբեր էին Շահ Աբասի տիրապետության տարիները, երբ անասելի դաժանությամբ իրականացվեց հայ բնակչության զանգվածային բռնագաղթ: Որ Վայոց ձորի բնակավայրերի մի մասը պահպանվեց գերեվարությունից հետո, ցույց են տալիս գավառի մի շարք հնավայրերի (Կարմրաշեն, Բարձրունի, Արտավան, Հորադիզ, Խաչիկ, Գյումուշխանե, Մարտիրոս, Գնդեվանք, Արենի, Հերհեր, Արատես, Շատին, Ագատակ, Ջեղեա) պահպանված XVII–XVIII դդ արձանագրությունները:

Վայոց ձորի մի շարք գյուղերում Շահ Աբասի ասպատակություններից հետո ոչ միայն պահպանվել էր հայկական բնակչությունը, այլև կառուցվում էին եկեղեցիներ ու կամուրջներ, անցկացվում ջրանցքներ: Վերջին տարիներին մարզի մի շարք բնակավայրերում հայտնաբերվեցին նոր արձանագրություններ, որոնք եկան հաստատելու այդ իրողությունը:

18. Վայոց ձորի Օղբին գյուղատեղի հյուսիսային եզրին է գտնվում կիսով չափ ժայռափոր եկեղեցին: Այն իր հյուսիսային հատվածով հենված է Օղբինի վրա իշխող, բարձրաբերձ ժայռին: Եկեղեցու մուտքի բարավորին փորագրված է յոթ տողից կազմված արձանագրությունը:

Համաձայն այս նորահայտ վկայագրի՝ Օղբինի եկեղեցին կառուցել է տեր Վարդանի որդի տեր Կիրակոսը 1666 թ, Սյունիքի հոգևոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ: Վերջինս չի հիշատակված Գ. Գրիգորյանի կազմած Սյունյաց գահակալ եպիսկոպոսների Գավազանագրքում<sup>24</sup>: Եարում անունով գյուղապետը ևս մեզ հայտնի չէ: Այս անձնանունը վկայված է մի անգամ՝ 1635թ. մի հիշատակարանում<sup>25</sup>: Վարդան և Կիրակոս հայր ու որդու գուրծունեությունը կապված է եղել հարավային


<sup>22</sup> Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 36:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 36–37: Այս անձնանունը տես նաև Կ. Ղաֆադյան. Մանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 200: Կ. Ղաֆադյան. Հաղթատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 282:

<sup>24</sup> Գ. Մ. Գրիգորյան. Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XIV դարեր), Երևան, 1981, էջ 280–281:

<sup>25</sup> Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 93:

Վայոց ձորի համաժամանակյա հոգևոր կենտրոնների հետ: Այլ վայրերում նրանք չեն հիշատակվում: Պայմանական է վերականգնված ՏԱԻՆ(ՈՒՏԵՐՈՒԹԻԲ) (ԱՆ/բառը. տեղում փորագրված է ՏՆԱԻԹ (այնուհետ մեկ տառ եղծված) տառախումբը, վերևում «պատիվ» նշանով:



Կ ԱՍՕՆ ԱՅ: ՇԻՆԵՑԱԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ: ԹՎ(ԻՆ( :Ռ:Ճ:Ժ:(1666)  
Ի Հ(ԱՅՐԱ(Պ(Ե(ՏՈՒԹԻ(ԱՆ( ՏՆ ՅԱԿՈՒԲԻՆ: ԵՐԿՐ(Ի(Ս: ԱՌ(Ա(Զ:ՆՈՐԴՈՒԹԻ(ԱՆ( Յ(Ո(ՀԱՆԷՍ ԵՊ[ԻՍ]Կ[ՈՊՈ]ՍԻ: ՏԱԻՆ(ՈՒՏԵՐՈՒԹԻԲ( ԱՆ( ԵԱՐՈՒՄԻՆ: ԵՍ ՏՐ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ ՏՐ (ԿԻՐԱ)ԿՈՍ ՇԻՆԵՑԻ Խ(Ա)ՉՍ ... (Յ)ԻՇԱՏԱԿ ՅՈԳ(Ո) ԻՍՈՅ ԵԻ ԱՇԽԱՏՈ(ՂԱՑ) ԵԿԵՂԵՑ(ՈՅ)Ս: ՈՒՍՍԱ ԳԻ....:


19. Հաջորդ նորահայտ շինարարական արձանագրությունը Սերս գյուղում է, եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին: Այն չորս տողից է:

Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի հովվապետության ժամանակաշրջանը (1655–1680) աչքի է ընկել եկեղեցաշինությամբ և արգասաբերությամբ ու պատահական չէ, որ, հատկապես, շինարարական վիմագրերի մեծ մասում մատնանշվում է երջանկա-հիշատակ կաթողիկոսի անունը: Պատահական չէ նաև Շահ Սուլեյմանի անվան հիշատակումը, քանի որ նրա շահության տարիներին երկրի բնակչության համար առկա էր քիչ թե շատ տանելի վիճակ, ինչի շնորհիվ որոշակի աշխուժություն էր նկատվում սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային ոլորտներում:

Վիմագրի 3–4 տողերում առկա են մի շարք տարակարծելի հատվածներ. ԵՍ բառից հետո մի տառատեղ եղծված է, ուրվագծվում Շ տառը: Այսինքն՝ անունը որոշ վերապահությամբ կարելի է կարդալ ՇԱԻԷՃԱՆ: Սակայն՝ հնարավոր է, որ այդտեղ տառ չի փորագրվել՝ քարի վնասված լինելու պատճառով: Ըստ այդմ էլ՝ բացառված չէ, որ անձնանունը եղել է Ախեճան, հատկապես, որ Ախիճան կամ Ախեճան անունը, ի տարբերություն Շախեճանի, բավական տարածված է եղել: Բառիս ՃԱՆ (Ա և Ն կցագրված են, տեսականորեն հնարավոր է կարդալ նաև ՆԱ) տառախումբը կրում է «պատիվ» նշան, այսինքն՝ կարող է ինչ-որ ձայնավորներ աղված են:

Վերձանության բարդ խնդրի առաջ է կանգնեցնում վերջին տողի ՇԻՆԵԼ բառին հաջորդած հատվածը: Այն անխաթար պահպանված է և պարզ կարդացվում է (ոչ վերձանվում): Բառակապակցությունը սկսվում է

Ե,Տ,ՈՒ,Ա,Ծ տառերով, ՈՒԱԾ-ի վրա կա «պատիվ» նշան, այնուհետև առնվազն մի եռաստառ փակագիր, նույնպես «պատիվ» նշանով: Քիչ թե շատ



ԹՎ(ԻՆ( ՌՃԻԵ (1676) ՇԻՆԵՑՕ ԶԵԿ(ԵՂ(ԵՑ(Ի(Ս: Ի Հ(ԱՅԴԱ(Պ(ԵՏՈՒԹԻ(ԱՆ( ՏՆ ՅԱԿ(Ո(ԲԻՆ, ԹԱԳ(ԱԻ(ՈՐՈՒԹԻ(ԱՆ( ՇԱՀ ՍՈՒ- ԼԷՄԱՆԻՆ: ԵՍ. ԱԽԷՃԱՆ ՊԱՏՃ(Ա(Ռ ԵՂԵԻ Է ՍԲ Ե(ԿԵ(ՂԵՑՈՅՍ ՇԻՆԵԼ Ե ՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԷ ԱՇ(ԽԱ(Տ(Ո(Ղ(Ա(Ց:

հասկանալի է վերջին ԱՇՏՂՑ տառախումբը, որը կարելի է վերծանել ԱՇԽԱՏՈՂԱՑ: Նախ, ինչպե՞ս հասկանալ ՇԻՆԵԼԵՏՈՒԱԾ հատվածը. միգուցե ՇԻՆԵԼ Ե ՏՈՒԱԾ կամ ՇԻՆԵԼ ԵՏՈՒԱԾ, այսինքն՝ «շինել տված»: Կարծում ենք, անհիմաստ կլինի կարդալ ՇԻՆԵԼ ԵՏՈՒ ԱԾ(աստված): Առավել խրթին է թվում փակագրի վերծանությունը: Այստեղ պարզորոշ կարդացվում են Մ կամ Տ, Ղ և Բ կամ ԸԲ( կամ՝ ԻԸ): Մենք դժվարանում ենք որևէ իմաստալից մեկնություն տալ այս փակագրին: Իմաստալին առումով ճշմարտապատում կարող էր լինել այդ ամբողջ հատվածի հետևյալ ընթերցումը՝ ՇԻՆԵԼ ԵՏՈՒ: ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՇԽԱՏՈՂԱՑ:

20. Հաջորդ շինարարական արձանագրությունը Հորադիզ գյուղից է:



ՇԻՆ(ԵՑՕ ԵԿ(ԵՂ(ԵՑ(Ի(Ս ԹՎ(ԻՆ( Ռ:Ճ:ԻԸ (1679)+ ՏԸ ՎԱՐԴԱՆԻ ՈՐԴԻ ՏԸ ԿԻՐԱԿ(Ո(Ս ԳՐ(ԵՑԻ:


Սա Վայոց ձորի հնագույն բնակավայրերից մեկն է և ունի մի մեծ շարք պատմական հուշարձաններ: Առանձնակի հետաքրքրություն ու կարևորություն է



ներկայացնում «Վանք» կոչվող համալիրը, որը գտնվում է Հորադիզի մոտ մեկ կիլոմետր հարավ-արևելք՝ մի ձորակի եզրին: Այն երկարավուն հորինվածքով միանավ եկեղեցի է, կից կառույցներով: Եկեղեցու որմերին, ներքուստ և արտաքուստ փորագրված են շուրջ չորս տասնյակ վիմագրեր, որոնց մեջ առանձնացրել ենք կառույցի արևմտյան մուտքի մեկ տողից կազմված կիսաբոլոր շինարարական արձանագրությունը:

Այս վկայագիրը, անկասկած, փորագրել է Օղբինի եկեղեցու բարավորի արձանագրության նույնանուն գրիչը՝ տեր Վարդանի որդի տեր Կիրակոսը, որը, դատելով իր վայելչագիր կերտվածքներից, եղել է հմուտ քարգործ վարպետ:


21. Տեր Կիրակոս քարգործի մի հիշատակագիր փորագրված է Օղբինի եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքի կիսակլոր բարավորին, 3 տողից.



ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է  
ՏՐ ԿԻՐԱԿ(ՈՍԻՆ ԵՒ ԿՈՂԱԿ-  
Ց(ԲՆ( ...ԱԽՈՒՆ:

ԽԱՉՍ-ը վերաբերում է բարավորի կենտրոնում քանդակված խաչանշանին: Ցավոք, Կիրակոսի կնոջ անվան սկզբնահատվածի 2-3 տառեր եղծված են:

22. Ուշագրավ է Հորադիզի մեկ այլ արձանագրություն, որը փորագրված է գյուղամիջի Ս. Նիկողայոս եկեղեցու ներսում՝ հյուսիսային ավանդատան մուտքին՝ որպես բարավոր օգտագործված տապանաքարի վրա, երկու տող.



ԹՎ(ԲՆ( ՁԻ (1491), ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ԳՈՆՑԱ  
ԽԱԹՈՒՄԻՆ, ՅԻՇ(ԵՑԷ(Ք Յ(Ա(Ղ(ԱԻ(ԹՍ:

Նորահայտ արձանագրությունների մեջ հիշատակված տեր Կիրակոսը վկայված է նաև Մարտիրոս գյուղի արևմտյան եզրին գտնվող հին գերեզմանատան 1661 թ. մի օրորոցաձև տապանաքարի չորս տողից հիշատակագրում, որպես կազմող.

Ինչպես տեսնում ենք, նախորդ արձանագրություններում Կիրակոսը հիշատակվում է մի դեպքում իբրև գրիչ, մյուս դեպքում՝ խաչքարի կանգնեցնող:



Սրձ. 1 ա



Սրձ. 1 բ



Սրձ. 2



Սրձ. 3



Սրձ. 4



Սրձ. 8




Արձ. 9



Արձ. 10



Արձ. 13



Արձ. 16ա



Արձ. 16բ



Արձ. 18



Արձ. 19



Արձ. 20



Արձ. 21



Արձ. 22

## ЭПИГРАФИЧЕСКИЕ ЭСКИЗЫ – 2

*ГАГИК Г. САРГСЯН, УСИК МЕЛКОНЯН*

## Р е з ю м е

Во второй части «Эпиграфических эскизов» представлены 22 новонайденные, или заново дешифрованные надписи. 1. Хранящийся в школе с. Гохтн (Котайкский марз) надгробный камень Шарвена, сына Атома, относится ко второй половине VIII или началу IX в. и является вторым датированным эпиграфическим свидетельством данного времени; 2–3. Две надписи из Гехардского монастыря, относятся к проведенным здесь в XVII и XIX вв. реставрационным работам; 4. Дарительная надпись Самуэла, сына Ваграмшака, являющаяся одним из важных эпиграфических памятников Дзагаванка, представлена в новом прочтении; 5. На северной стене притвора монастыря Техеняц начертана дарительная надпись Вецика – известного архитектора Кечарисского монастыря; 6–7. Большую источниковедческую ценность представляют две дарительные надписи Курда Тапатечи, сына Смбата, из монастырей Техеняц и Нехуц; 8–10. Столь же значимы три надписи из монастыря Бджни, в которых упомянуты Григор Васакаян Пахлавуни, настоятель монастыря Вртанес, а также приведены данные о времени строительства колокольни; 11. В притворе монастыря Нехуц сохранилась дарительная надпись с упоминанием имени Амирпека – до сих пор неизвестного сына патрона города Ани Сахмадина; 12. Важное источниковедческое значение имеет также строительно-дарительная надпись о возведении кафедральной церкви монастыря Макраванк; 13. Одним из самых ранних эпиграфических памятников церкви Св. Богородицы с. Норатус является памятная надпись 1013 г., начертанная на постаменте хачкара; 14. В поле близ г. Джермук установлен хачкар, вырезанный известным мастером Хоцадехом, с примечательной надписью; 15. На венце южного окна книгохранилища монастыря Сахмосаванк вырезано имя архитектора Мкртича; 16. В краеведческом музее с. Кохб хранится уникальный образец армянской эпиграфики – каменная плита с двухсторонней надписью 995 г., с упоминанием Кюрикийского царя Давида Анохина (Безземельного); 17. На кладбище Севанского монастыря сохранился надгробный камень Ванени, дочери Ашота, датируемый 969 г. и являющийся собой самое раннее упоминание этого женского имени; 18–22. Из Вайоцзорского марза происходят 5 строительно-поминальных надписей второй половины XVII в.

## EPIGRAPHIC NOTES – 2

*GAGIK G. SARGSYAN, HUSIK MELKONYAN*

## S u m m a r y

In the second article of “Epigraphic Notes” are presented newly-found or newly-deciphered 22 inscriptions. 1. Kotayk region, village Goghtn – a two-sided grave-stone with inscription is dated with U hundred (tens and the unit are destroyed). The grave inscription of Sharven, son of Atom can be chronologically considered as the second document dated to the second half of the 8th or beginning of the 9th century. 2–3. Katoghike church, Geghardavank – a khachkar from 1642 and an inscription of Abraham Avagyan from Garni, Mkrtych Ter-Arakelyan from Yerevan and two Kurd donators, both on the southern wall of the church. 4. Dsagavank – a donative inscription on three stones by Vahramshak son of Samuel, the newly-deciphered and supplemented version of which is presented in the article. 5. Teghenyats monastery – inscription of the architect of Kecharis Vetsik, which is the second example with the name of this master. 6–7. Teghenyats and Neghuts monasteries – two donative inscriptions of Kurd Tapatetsi, son of Smbat, a name unknown until now. 8–10. Bjni monastery – unique documents of Grigor Vasakyan Pahlavuni with mentioning of Vrtanes bishop – the head of the monastery, as well as the eparchy and an inscription which probably demonstrates the building time of the bell-tower. 11. Neghuts monastery – donation inscription of Amirpek, son of the patron of the town of Ani Sahmadin. The name of Amirpek appears for the first time. 12. Makravank – building and donation inscription of the main church of special significance. 13. St. Astvatsatsin church in Noratus – inscription on a khachkar base from 1013, one of the earliest documents of the church. 14. Jermuk – not far from the town in a field stays a khachkar with an interesting inscription of the mason Khotsadegh. 15. Saghmosavank – on the edge of the southern window of the library is engraved the inscription of the teacher Mkrtych. 16. Koghb village, local History museum – a unique for Armenian epigraphy stone table with two-sided inscription dated from 995. 17. Sevan peninsula, cemetery around the monastery – grave stone of Vaneni, daughter of Ashot. 18–22. Vayots Dzor region – five building and commemorative inscriptions from the second half of the 17th century.